

ԲԱԺՆԵԳԻՆ
Ի Պոլսկարիա
Տարեկ. 10 ֆր
Վեցամս. 5 „
—
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 „
—
Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
—
ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏԱԿ
Գրութիւնքեա
չեն տրուիր
—
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGABIE
—

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Դ. ՏԱՐԻ

— ԴԵԿՏ. 23 ՇԱԲԱԹ 1900 —

ԹԻԻ 192

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Հեղերհէլ 5 Դեկտ. 1900

Նախորդ թղթակցութեամբս մէկ քանի տեղեկութիւններ տուած էի նոր աշխարհի հայոց վրայ. խոստանալով հետզհետէ ծանօթացնել «Հայ-յեղի» ընթերցողները տեղւոյ հայկական կեանքին հետ՝ ազգային, ընկերական և այլ տեսակէտով, առանց մալի՜ չափ ճշմարտութենէն չեղելու, քանի մը տարիներէ ի վեր իմ հաւաքած տեղեկութիւններուս ամփոփումին մէջ,

նոր աշխարհի անունը հայ ժողովուրդին մէջ տարածուելէն, կամ աւելի ճիշդը ամերիկեան միօրօնարներուն թուրքիս մտնելէն ետքը՝ Հայաստանի գաւառներէն դէպի այս երկիրը դիմած են շատ մը պանդուխտ հայեր իրենց բազմաթիւ փորձելու համար։ Այդ կանուխ եկողներուն մէջ բաւական յաջողութիւն ունեցողներ եղած են, այնպիսի ատեն մը՝ յորում գործատէրեր և կամ անոնց գործակալները նիւ-Եորքի նաւահանգիստը մտնելիք շոգենաւներուն սպասելով, հայ գործաւորները կը դիմաւորեն եղեր. այդ ժամանակի վճարումներն ալ բնականաբար լաւ էին, ասկէ քաջալերուած՝ պանդուխտ հայեր՝ իրենց բարեկամներն ու ազգականները թուրքիայէն հոս կը հրաւիրէին. վերջիններէն շատերը իրենց տունն ու արտը, այսինքն ու պարտէզը ծախելով կամ՝ գրաւի դնելով, ոմանք ալ իրենց բողոքական կրօնակիցներէն հոս օգնութիւն գրտնել յուսալով և մինչև իսկ պարտք ընելով ճամբայ կելնեն եղեր դէպի այս Աւետեաց երկիրը։

Վերջին դժբաղդութիւնները տասնեակ հաւարներու հասուցած են գաղթականութեան թի-

ւը։ Կանուխ եկողներուն մէջ ունեւք խոհեմութիւն ունեցեր են իրենց ճամբորդութիւնը քիչ մըն ալ երկարելով հասնիլ մինչև օրհնեալ հողը, Գալիֆօռնիա, ուր ուրախ ենք ըսել թէ մասամբ իբր կալուածատէր և մասամբ իբր վաճառական աւելի լաւ դիրքեր ունին քան հիւսիսային նահանգներու մէջ մնացողները, որոնք միքենայի մէկ թեւին պէս գործատիրոջ ձեռքին մէջ կը գործածուին՝ սպասելով անոր միլիոններու շնորհէն յառաջ եկած փոշիի հատիկներուն։ ու այն ալ ինչ դժուարին միջոցներով։ Շատ անգամ օտար գործաւորներու հետ արիւնահեղ կռիւներ ալ կուենան, որոց պատճառն է՝ Հայուն նուազ օրականով գոհանալը։

Հայ ընտանիքներուն թիւը միշտ շատնալու վրայ է գրեթէ ամենօրեայ նորեկներով։ Այսպէս հայ տարրը այլ ևս լոկ պանդուխտ ըլլալէ դադարելով, տակաւ կանոնաւոր գաղթականութեան վիճակին մէջ կը մտնէ, ինչ որ աւանդ, շատ ցաւալի բան է, ցաւալի մանաւանդ երբ նկատողութեան առնենք որ գաղթականութիւնը բոլորովին ցիրուցան, անհամբերաշխ, անկազմ ու անիշխանական դրութեան մը մատնուած, օտար զօրաւոր հոսանքներու դիմագրաւելու համար պատուար մը չունի իր թիկունքը։ Խոստովանինք թէ ուղեցոյց չունեցող նաւու նման աննպատակ ճամբորդութեան մը մէջ ենք հոս։ Ամենքս ալ իրարու դէմ՝ սրդողածի պէս զիրար չինք ուղեր տեսնել, իրարու վստահութիւն չունինք, մինչև իսկ զիրար կը բամբասենք, կանուանարկենք ու կը զրպարտենք։

Այս երկիրը ազգերու այլազան բաղադրութիւն մը կը ներկայացնէ. ամէն ազգ իրեն ազգային, կրօնական և ընկերական կազմակերպութիւնը ունի, որուն անդամն է հարուստն ու աղ-

քատը, գիտունն ու ռամիկը, այլը և կինը հա-
ւասարապէս մին իր դրամովը, մյուսը հանձա-
րովը, ուրիշ մը իր ուժովը կօգնէ իր պատկա-
նած հասարակութեան գործերուն, մինչդեռ
մեր մէջ ասոր հակառակը կը տեսնուի մեր հա-
րուստը ժողովուրդի հասարակ խաւերուն մէջ
չուզեր մտնել ու գործել, հոն անցած դարձած-
ները իբր տղայական գործեր արհամարհելով,
առանց սակայն ինքն ալ որոշ ուղղութեան մը
հետեւելու (բացառութիւնք յարգելի են):

Ամերիկայի 15-20 հաշար հաշուուող հայ գաղ-
թականութիւնը իր մէջ ունի զանազան կուսակ-
ցութեանց պատկանող 4-500 յեղափոխականներ
կամ անոնց համակիրներ միայն, և անոնցմէ
կը սպասուի ազգին գործերուն բարւոք կարգադ-
րութիւնը, անոնցմէ որ իրարու հետ չը համա-
ձայնելով, իրար չը հասկնալով բոլոր ազգային
գործերու առկախ ու անկերպարան մնալուն
պատճառ կըլլան. չափազանցութիւն ըլլած չեմ
ըլլար երբ ըսեմ թէ նազարբէկեան ծանօթ շա-
հատակութենէն ի վեր տեղւոյ ժողովուրդը սիր-
տը կոտրած, անտարբեր հանդիսատես մը դար-
ձած է յեղափոխական գործիչներու շարժումնե-
րուն հանդէպ, որովհետեւ ի նպաստ Զէյթունի
տղարներու խոշոր գումարներ երբեմն զրկուած
են Ամերիկայէն ալ:

Պիտի տխրի դուցէ յարգելի ընթերցողը որ
ամերիկաբնակ ազգայնոյս ներկայ վիճակը փայ-
լուն գոյներով ցոյց չեմ տար, ինչ որ թերեւ
հեռուն գտնուողներուն համար անախորժ անա-
կընկալ մը ըլլայ: Պէտք է սակայն առանց ինք-
զինքնիս խաբելու խոստովանիլ թէ՛ ամեն երկ-
րի մէջ հայերս միեւնոյն նկարագիրը ունինք որ
ամեն տեղ միեւնոյն տխուր արդիւնքը կու-
տայ. կարծես թէ ճակատագրական դարձած է
մեզի զիրար չի հասկնալ, և ասոր հետեանքով
մեր ամենէն կենսական պէտքերը չի կարենալ
հոգալ ու հետեւ պէս դէպ ի կորուստ գլխի:
Փռձառութիւն և երկար ու ուշադիր գիտողու-
թիւն ինձի սա անխախտ համոզման հասուցած
են որ եթէ Հայերս կուզենք բան մը ընել և
բան մը ըլլալ, նախ պէտք է սորվինք «զիրար
հասկնալ»: Այս է միակ, անհրաժեշտ և անխու-
սափելի պայմանը մեր յաջողութեան:

Ս. ԿԵՐՕ

բանոցներու և նոյաւորընկալ վարժարաններու նոյ-
գեկո. ամսականները կը կազմէ:

—Սեփաստիոյ առաջնորդ Տ. Պետրոս եպի-
սոփոսոյն ժողովրդին հաւանութեամբը սկսեր է Ս.
Նշան վանքին գոյքերը աճուրդով ծախել: Մին-
չև հիմա գոյացեր է 400 ոսկիի գումար մը:

—Պէրութի ամերիկեան գօլէճը այս տարի
բաւական թուով հայ ուսանողներ ունի եղեր,
մեծ մասը Խարբերգէն:

—Տեղւոյս երկսեռ Որբախնամի Գործ. ժողովը
իր շնորհակալութիւն կը յայտնէ Ալեքսուհի Տի-
կին Տիրուհի Կ. Թօգատեանի, որ ընկերութեան
համար պէտք եղած պաշտօնական կնիքը պատ-
րաստել տալով նուիրեց:

—Լ'Առմէնի իր դեկ. ի թուոյն մէջ կը յայ-
տարարէ թէ «Բրօ Արմէնիան Տրէյֆ, ւզառ կու-
սակցութեան գլխաւորներէն ոմանք հիմնած են
Գրօշակեաններու գործակցութեամբ:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՈՍԿՈՐՆԵՐՈՒ ԳԻՒՏԸ

Յայտնի է մեր ընթերցողներուն որ Վեհ.
Հայրապետի հրամանով Դատեան Խաչիկ վարդա-
պետ պեղումներ կատարել կուտար Առապարի Ս.
Գրիգոր եկեղեցիին (որ Զուարթնոյ եկեղեցի ալ
կը կոչուի) աւերակներուն տակ: Ազգային բաղձա-
թիւ պատմագիրներ յիշած են որ ներսէս Շինող
կաթողիկոսը Ս. Լուսաւորչի ոսկորները թորգանէն
բերել տալով, այդտեղ եկեղեցի մը շինել տուած
է որու հիմերուն տակ թաղել տուած է Լուսա-
ւորչի ոսկորները: Այդ գրութիւններու նշանակա-
ծին համեմատ կատարուելով պեղումները, աւե-
րակ եկեղեցիի հիմերուն տակէն հոկտ 15 | 28ին
գտնուած է Ս. Լուսաւորչի ոսի անրակային ոս-
կորը, որ անպայման վարպետի փղնկի անճշտ մէկ
հարուածովը փշրուեր է մի քիչ բայց կտորները
քով քով բերուելով, էշմիածնէն յատկապէս
բերուած գեղակերտ սուփի մը մէջ առնուեր և
խորանաձև տեղ մը դրուեր է որ ուխտատեղի
դարձեր է այժմ:

Այդ եկեղեցի շինուած էր կուստան մը ա-
ւերակներուն վրայ. ուստի պեղումներն աւերի

ԱՅԴԱՅԻՔ

Անցեալ ամիս Պատրիարքարանէն գաւառ-
ները խրկուած է 918 ոսկիի գումար մը որ որ-

առաջ տարուելով, երևոն եկեր են նաև հեթա-
նասական ժամանակի կարգ մը անձանոթ բե-
ռագիրներ որոնց ընթերցման համար Վ. Հայ-
րապետը Էջմիածին կանչեր է Տիար Կ. Բասմա-
ջեանը որ ինչպէս յայտնի է, բեռնագիրներու
մասնագէտ մ'է :

1840էն ի վեր, Էջմիածնի կաթողիկոսները
մտադիր եղած են փորել այդ եկեղեցիին հիմե-
րը, փնտռելու համար Լուսաւորչի մասունքը .
բայց այդ մտադրութիւն այժմ միայն կրցաւ
գործադրուիլ և յաջող կերպով :

Արմենիա

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Կալացի Արք. Տ. Ղեւոնդ Քահանայի 1901 տար-
ւոյ ընդարձակ օրացոյցը, նախորդ տարիներէ աւելի շա-
հեկան ու հետաքրքրաշարժ տեղեկութիւններով : Գիմել
յօրինողին, ի Կալաց (Ռուսմանիա) և կամ Ա. Զարպա-
նէլեան գրատունը ի վառնա : Գրածի փոխարէն նաժա-
կագործ մ'ալ կ'ընդունուի :

1—3

ՃԵՂԵՊԻՐ

Աժանս Բոժոժիկ և Ընկ.

Բամշաթքա

Որոշրաւաճառաց երկրորդութիւնը առե-
տրական հրապարակի մէջ նմանը չտեսնուած
յաղթանակ մը տարաւ 9000 զրուշի պճողկները
(արշաւ) 7000ի ձեռքէ հանելով :

Բոժ.—Նասրէտտին հօճան ալ 10ի առածը
8ի կը ծախէ եղեր, «տոթլար պէնի ալըշլէրիշ-
տէ կէօրսին» ըսելով :

Նոյն

Սղնական խմբագիր մը երէկ երկու ժամ
բանտարկութիւն կրեց . . . պիպիթեֆի մէջ,
ուր դացեր էր ստար թերթերէ լրաքաղ ընելու,
ցօրեկուան 10 վայրկեան մնացած : Պիպիթեֆի
հսկող պաշտօնեայն՝ անկիւն մը ցուրտէն կծկտած
ու թերթերու մէջ թնջուած այդ խմբագիրը չը
տեսնելով, ժամը 12ին դուռը վրայէն կզպեր ու
ճաշելու գացեր էր . որով Պ. խմբագիրը ստիպ-
ուեցաւ երկու ժամ հոն ճգնել . . . առաջ տու-
նալիով :

Դանուրի բերան

Երեք ամիսէ ի վեր ամսականի երես չի
տեսնող դասատուներս երէկ իր ժամացոյցը 30
յրուշի փոխարէն ըռէհիմ ձգեց . . . Թալ. խոր-
հուրդի անդամներէն մէկուն մօտ :

Թոնքին

Մուխալա տօլմաիի վաճառական պարոն
մը՝ որ առեւտրական գործի պատճառաւ Թրիէս-
թէ կը գտնուէր, իր Պիրմինկամի սիրուհւոյն ան-
ուան տարեգարձը շնորհաւորող գաղտնի նամակ
մը շրկած էր : Սատանան՝ որ միշտ աւանկ գոր-
ծերու կը միջամտէ, այդ նամակը պահուած տե-
ղէն վերցնելով տարիս յանձնէր էր տանը փաթ-
րկելին՝ Վահէի, որ անոր ծայրէն դերձօն մը կա-
պած իբր թուցիկ, սխաւ սննեակին մէջ հոս հոն
վաղվառել . նոյն մը շոյին հայրիկը վրայ հասաւ ու
թուցիկը կարգաւոր . . . բամբ . . . սրտան . . . Մը-
նացեալը կրնար գուշակել :

Հոնկ—Քոնկ

Ի խնդիր ամուսնութեան՝ սոսկալի կռիւ մը
տեղի ունեցաւ . . . երկու քոյրէրու մէջ . մեծը՝ պըզ
տիկին մատը խածաւ վիրաւորեց, պզտիկն ալ՝ մե-
ծին ուսը : Մանրամասնութիւնք թղթատարով :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԳՊԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԲ ՖՐԱՆՍԱԶԱՅ

Պատկերապարդ

Հաստի Առաջին A—E

Սոյն բարգիւրքը որ Ն. Ա. Բարձր. Իշխան Լուսին-
եանի երկար տարիներէ ի վեր կատարած ուսումնասի-
րութեանց արդիւնքը կը ներկայացնէ, այս անգամ հը-
րապարակ ելած է 1061 երեսներէ բաղկացեալ : Սա իր
տեսակին մէջ առաջինն է, որովհետեւ գիտական, բու-
սական, ճարտարապետական, բժշկական և այլ ամեն
տեսակ անհամար բառեր պարունակելով, անոնց այլ եւ
այլ իմաստները կը սորվեցնէ ոճերու մանրամասն բա-
ցատրութեամբ և գեղեցիկ պատկերներով : Ֆրանսերէն
և Հայերէն լեզուներուն միանգամայն ծանօթանալ ու
ղղներուն համար անհրաժեշտ պէտք մըն է այս : Ամ-
բողջ գործը երկու հատորէ պիտի բաղկանայ : Ա. հա-
տորի թղթակազմին գինն է 25 Ֆրանք : Պուշկարիոյ և
Ռուսմանիոյ մէջ ստանալ փոփոխութիւնները պէտք է զիմն
«Հայերէն» խմբագրութեան :

ԶԱՆԱԶԱՆՔ

Կնոջական շարժումներ.—Գեղուհիներու աշխարհին մէջ անակրնկալներ կը պակսին. սիրուն, տղեղ, նպատակաւոր կամ աննպատակ, խնդիրը հոն չէ, բաւական է որ վերջակէտը շօշափեն եւ ակրնկալուած արդիւնքն ունենան.—տեսնել կամ տեսնուիլ և շարունակ ուշադրութիւն գրաւել, ասկէց աւելի ի՞նչ կուզէք: Փետուրը չարժել ու ենթակայ է միշտ, ամէն հովէն ալ: Ի՞նչ կըլլայ — «կեցած շուրջ կը հոտի»:

Մեր գեղեցիկ ախոյեանները, որոնց հետ յաղթել կամ յաղթուիլ միեւնոյն բանը կը նշանակէ և միեւնոյն չափով հաճելի է, միշտ նոր տրնձգութիւններ ընելու ճամբուն մէջ են այրելու — տղեղ սեռին — յատուկ առանձնաշնորհումներու սահմանին վրայ: Այս անգամ ալ արձագանգը Պէտլինէն կուգայ: Քմահաճոյքին նախագահութեամբ գումարուած էյէկանթներու ակադեմիան, կը գրէ Փարիզեան թերթ մը, վերջերս որոյցած է շիֆ դաւազաններու գործածութիւնն ընդհանրացնել գեղեցիկ սեռին մէջ ալ: Տկար սեռը զօրաւորէն աւելի պէտք չունի այս բանին. — իրաւ որ շատ տրամաբանական է:

Այս առթիւ միտքս կուգայ արեւելեան գեղեցիկ աւանդութիւն մը: Աստուած երբոր Ագամը ստեղծեց, զայն շատ պաղ, քիչ մը աւելի կոշտ ու վայրագ գտնելով՝ արեւէն կայծ մը կրակ, լուսնէն պուտ մը ծրագ, եւ երկինքէն պտղունց մը ցօղ առնելով՝ շագուժի կեանքը փչեց ու կինը ստեղծեց:

Ի՞նչ աղէկ կըլլար որ կինը ստեղծագործութեան խորհուրդը շարունակ պահպանէր և անով միայն տիրապետել ուզեր այր մարդուն վրայ:

Ծիրանի գօտիին (*) տակէն անցնելու մտածումը և ասոր համար եղած շանքերն՝ ապարդիւն ու ցնորք են:

Կինը վաճառական.—կը հաւատամ, քիչ ատենէն կը հարստանայ, սակայն այդ է՞ անոր կոչումը, խեղճ բան:

Կինը փաստաբան.—դատաւորներուն աչքը լոյս, ապուշ բան:

Կինը չափագէտ.—պա՛ղ բան:

Կինը ճարտարապետ.—տափակութիւն:

Կինը բանաստեղծ.—կինը մայր—կինը տանտիկին: —Հրաշալի բան, մարդուն հոգւոյն թագուհին, սրտին աստուածուհին ու մխիթարու-

(*) Բնատոհմային նախապաշարում մը, որուն նայելով՝ աղջիկ մը եթէ ամպի գօտիին տակէն յաջողի անցնիլ, մանչ կը դառնայ:

թեան հրեշտակը — Գիծութեան հրեշտակը: — Ի՞նչ ճէպակն Կինն է ան:

Ու ի՞նչ աղէկ կըլլար որ կինը միշտ խորհուրդ մնար:

ԼՈՒՍ—ԼՈՒՍ

Կեանքանիւններու արցունք.—Գիտենք որ բոլոր որոճացող կենդանիները կուլան նշանակելի դիւրութեամբ «Հորթի մը պէս լալ» արտայայտութիւնը առածի կարգ անցած է: Բայց միայն հորթը չէ որ կարտասուէ, բոլոր որոտրդները գիտեն թէ եղջերուն յետին տագնապին մէջ հեղեղի պէս արցունք կը թափէ: Այժմամբ, արջը, ընձուղտը, հիւսիսեղէնը հաւասարապէս զգայուն են. հաստատուած է շատ անգամն որ շուններն ալ կուլան:

Ծովային ստնտու կենդանիներն ալ կ'արտասուեն, բոլոր գրողներն ալ կը համաձայնին ըսելու որ դիւրինները իրենց մահուան ժամանակ խոր հառաչանքներ կ'արձակեն և արցունք կը թափեն: Պատիճաւոր փոկ մ'ալ տեսնուած է որ կ'արտասուէ եղեր, որովհետեւ նա աղ մը զայն կը շարչարէր: Ժօֆյուա Սէնդ. Իլէր և Թ. Գիւլիէ կը հաստատեն թէ եթէ փոքրիկ տիւկօնք մը բռնուի, վստահ պէտք է ըլլալ որ մայրն ալ ինքնիւրենը կուգայ, որովհետեւ փոքրիկները սուր ճիշ մը կ'արձակեն և կ'արտասուեն:

Փիղն ալ նշանաւոր է արցունք թափելու տեսակէտով. միայն կսկորդիլոսն է որ երբէք չի լար...:

Սուղ հեռագիրներ.—Արեւիկեան թերթերը կը գանգատին Վաշինկթօնէն Մանիլա քաջուած հեռագիրներուն ողութեանը վրայ, առանց նկատողութեան առնելու հեռագիրներուն կտրած ճամբան: Վաշինկթօնէն ղրկուած հեռագիր մը Մանիլայի համար նախ նիւ-եօրք կերթայ, անկէ Վալինգինա (Իրլանտա) յետոյ Պրայկթօն (Անգլիա), վերջէն Հալբը (Ֆրանսա), վերջապէս կը հասնի Մարսիլիա: Անկէ կը ղրկուի Աղեքսանդրիա (Եգիպտոս), Ատէն (Արաբիա), Պոմպայ (Հնդկաստան), Մատրաս, Սինկաբուր, յետոյ Սայկուն (Հնդկաչին), անկէց ալ մինչև Հոնք-Գոնկ ճամբորդութիւն մը կընէ ու վերջապէս հեռագիրը կը հասնի իր ղրկուած տեղը, Մանիլա, 15,000 ծովային մղոն ճամբայ կտրելէն ետքը:

ՏԱՐԵԳԼՈՒԻԸ ՄՕՏԵՆԱԼՈՒՆ ԱՌԹԻԻ

Երկու լեղուաւ (Հայերէն և Ֆրանսերէն) 100 այցաբարտը կը տպագրուի 1 1/2 Ֆրանքի. դիմել խմբագրութեան, քաղաքներու համար 1 զրուշ բօսթի ծախք. փոխարէն նամակագրոյժ ալ կընդունուի:

Ծ Ի Ծ Ա Ղ

Նիւ-Եորքի մէջ օրիորդ մը երիտասարդի մը դէմ դատ կը բանայ քսան հազար տօլար տուգանք պահանջելով, ամուսնութեան խոստումը չկատարելուն համար:

Երիտասարդը աղջկան ծնողացը գիմելով կըսէ.

—Տէր իմ, նշանուած ժամանակս դուք միշտ դէմ էիք ձեր աղջկան հետ ամուսնանալուս. այժմ փոխանակ ուրախ ըլլալու, դատ բացեր էք ինծի դէմ. պատճառն ի՞նչ է.

Աղջկան հայրը—Պատճառը սա է որ մեր ընդդիմութիւնը զգացման հետեւանք էր, իսկ դատը՝ տուեալուր է...

Երկու մտերիմներ

—Դէմքերուն մէջ ամենէն աւելի ո՞ր դէմքը կը սիրէք.

—Ինծի փոխ դրամ տալիք մարդուն դէմքը.

—Եւ ո՞ր դէմքը չէք սիրեր.

—Այն անձին 31 կամ 61 օրէն ետքի դէմքը:

Փրանսական դիւղի մը մէջ, կին մը ծանր հիւանդութենէ մը ետքը թմրութեան մէջ ինկաւ. ամուսինը և շուրջը գտնուողները զայն մեռած կարծելով դադաղի մը մէջ դրին ու թաղելու տարին: Ճամբան, դադաղակիրները մացառի մը քովէն անցած միջոցնուն, փուշ մը մեռեալը խայթեց և զայն իր թմրութենէն արթնցուց: Տասնըչորս տարի վերջը նոյն կինը մեռաւ ծերութեան մէջ: Երբ դադաղը դարձեալ մացառի մը մօտէն կանցունէին, ամուսինը սկսաւ պոռալ. «Փուշերուն քովէն մի՛ տանիք, նորէն փորձանք պիտի բանաք գլխուս...»:

«ԱԳԱՅԸ ՄԻՅՏ ԿԸ ՏՈՒԺԷ»

Անցեալ տարի Մովկիմ աղա անուն 65 տարեկան ամուրի կծծի մը կեօթիւրիս քաղաւ տուն մը շինել տալէ ետքը պէտք եղած օրինական ծախքը չի վճարելու ազահութեամբ ալ առանց

պայմանագրի զայն վարձու կուտայ ամսական 30 ֆրանքի, ու երբ Ա. ամսագլխուն վարձքը դանձելու համար վարձուին կը ներկայանայ, այս վերջինը իրեն կըսէ.

—Վայ Մովկիմ աղա, հօշ կէտինիդ, պուշուրուն. պէնտէնիդ տէ պիրիսինի կէօնտէրիպ սիդի չաղըրթաճագ ըտըմ:

—Խայր օլա, ինչալլահ էվտէն խօշնութսընը:

—Եէրտէն կէօյէ գատար խօշնութը. տօլրուսու, բէք հավատար. բէք կիւզէլ. ֆագաթ սիդ պու էվի կէօթիւրի մի եաբտըրտընը.

—Էվվէթ.

—Հա... էօյլէ օլմալը. զիրա բէք չէրչի շէյ. գարտաշ:

—Նէրէսի չէրչի տիր պունուն:

—Բօրեաղըղըն չէրչիվէլէրի թէքմիլ պօզուգ. եաղմուր արալըգլարտան իչէրի վուրույօր. պիզիմ բահաթսըղըղըմը պիր եանա, էվէ եաղըգ օլույօր, գարտաշ, պունու պիր սաաթ էվվէլ եաբտըրմալը:

—Աճապա գա՛ն զրուշա օլուր շէյ տիր:

—Իբի իւ չ նարօլէսնըգ լագըրտը. բէնծիրէլէրէ տիշարտան պիրէր դանատ եաբտըրմալը. էկէր իսթէրսէն՝ պէնէմ պիր տօղրամաճը ահապըմ վար, ուճուզճա եաբտըրայըմ:

—Թէշէքբիւր իտէրիմ. էօյլէ իսէ սիդ եաբտըրըն տա՛ սօնրա քիրայա սայըշըրը:

—Պաշ իւսթիւնէ. պէն օնու կիւզէլճէ եաբտըրըրմ, սիդ բահաթ օլուն, ըսելով տանտէրը ճամբու կը գնէ:

Երկու ամիս ետքը մարդը դարձեալ կերթայ ամսական ուզելու. վարձակալը առանց սպասելու անոր տալիք բարեկին, կըսէ.—Մովկիմ աղա, կալիպա քիրա իչիւն կէտինիդ:

—Էվվէթ. մալիւմ ա՛...

—Պաշ իւսթիւնէ, վէրէյիմ ամա՛սանա պիր բէճամ տահա վար. եէմէք օտաարնտա պիր տօլապ եօգ տըր. ուֆագ թէֆէքլէրի նէրէտէ հըֆը իտէճէիմիդի պիլմէյօրըգ. պիր տէ պահչէ գաբուսունա պիր անախթար եաբտըրմալը.

—Տէմէք օլույօր քի պիզ պու սյ տա քիրա ալումայաճաղը:

—Լաղըմըն վար ըսա վէրէյիմ. պանա կէօրէ հավա հօշ. ֆագաթ տէտիքլէրիմի պիր սաաթ էվվէթ եաբտըրըն. լագըմը շէյլէր տիր:

— Սիրէ նէ գատար զահմէթ իւէ լազլմ օլան
եաբարըն տա՝ սօնրա սայրընը:

— Պաշ իւթիւնէ. պէն հէր շէյի էհվէն եօլ-
լու եաբար եագընորըն: Եաբարընը օլտու-
ղում բէնչէրէ զանաւարընտա զիյատէ պիր շէյ
կէօրտիւն մի:

— Եօգ, սաղ օլասըն. պէնտէն տէ ունուզ եաբ-
արըն, օրսուն տէյէճէիւ, շիմտիլիք հօշճա զալ:

— Սէֆա կէլտին Մովկիմ աղա: Ամիս մը ետքը
Մովկիմ աղան, ձեռքովը դրածի պէս, տան
վարձքը առնելու համար վարձու տուած տունը
կերթայ և դուռը զարնելով, «Մաթոս աղան հոս
է» կը հարցնէ:

— Թէնէքէճի մը կանչելու գնաց, հիմա ուր է
նէ կուգայ:

Այս պատասխանին վրայ Մովկիմ աղան մտմը-
տուքը կառնէ ու ինքնիքն կըսէ. — Կալիպա
պու այ տա քիրա ալամայաճաղը, շիմտի տէ ի-
շին իշինտէն թէնէքէճի չըղըյօր:

Նոյն միջոցին դուռը զարնուելով Մաթոս ա-
ղան կը վերադառնայ:

— Վագըթլար հայր օլտուն Մաթոս աղա:

— Հօշ կէլտինիլ Մովկիմ աղա, գարտաշ, պիղ
պու էվէ թաշընտը պէլայա օլրատըգ, աղշամ-
քի եաղմուրտան՝ օտանըն իշինտէ նէ՝ սէտիր
գալտըն նէ՝ էշեա, էվին իշի սէլ պաստր. սապա-
հա գատար օտատա՝ օտայա բըրթը թաշըմագ-
տան հալ կէլտի պաշըմըղա: Սէն պու էվի քիմէ՝
եաթըրտըն. չըգ, չըգ պիր քէրէ կէօղիւն իլէ
կէօր եօգարընը:

— Աղնատըգ գարտաշ, պիր շէյ տիր օլտու.
շիմտի պիղ գաշ այ տահա քիրա իսթէմէյէ կէլ-
մէյէիւ:

— Օպիրայ պաշը կէլինիլ, հիսապընը իտէրիլ:

— Պարէ նէ լաղլմսա թօքտան եաբարը տա՝ օ
պիր կէլիշիմտէ պիր գուսուր գալմասըն:

— Պաշ իւթիւնէ. արթըգ աննաշըտը քի
պիղ պու էվէ գալթալըգ իտէճէիլ ըսելով տան
տէրը դարձեալ ճամբու կը գնէ:

Ասու գլխուն Մովկիմ աղան ալ միտքը կը
դնէ որ տան վարձքը դանձելու համար այս ան-
գամ վարձուրը ինչ առարկութիւն որ ընէ ա-
կանշ չի կախէ. ուստի կիրակի առտու մը կելլէ
անոր կերթայ:

— Բարի լոյս Մաթոս աղա:

— Եւ Աստուծոյ բարին Մովկիմ աղա. պէ աղ-
բար, մենք ա՝ տունին պէլայէն չպիտի՝ աղա-
տընք:

— Կէնէ նէ՝ վար Մաթոս աղա:

— Նէ՝ օլաճագ, գարտաշ, գույունուն տուվարը
սուլու էմէ էմէ չիշմիշ երգըլապ տէրէճէտէ
գալպուռանմը օլտուղունտան՝ արթըգ գօր-
գույօրը սու չէքմէյէ:

— Նէ՝ պիշիմ ողջ չէքմէք տիր քի տուվար սու
էմէյօր վէ երգըլեօր:

— Արթըգ օրասընը պիլմէմ. բարա իլէ սու
թաշըթտըրըյօրըգ էվէ:

— Պէ ա՝ գուղում, պիղ պու էվէ էքէյի մէրա-
մէթ իթտիք. պալէ սէն տէ պանա մէրհամէթ
էթ տէ՝ պիր այլըգ օլտուն վէր քի՝ իսթիւնէ
պագըպ սէվինէյիմ. պու եէտի այ օլտու. տահա
պիր բարանըղը քէսէմիլէ գօյմատըգ:

— Էյի ամա, պիղ տէ վէրէճէք քիրամըղը եի-
նէ սէնին էվինին իսթիւնէ հարճայօրըգ. պէօյ-
լէ չէրշի էվ եաբարըպ այ պէ այ քիրալարը
ալմագ քիմ իսթէմէյ:

Մովկիմ աղան այս խոսքերէն նոր հասկնալով
վարձուրին բռնած ճամբան՝ տուանց մնաք բարո-
վի կը մեկնի և ուղղալի իր մէկ բարեկամին
դիմելով, ցաւը անոր յայտնելէ ետքը կը յա-
ւելու:

— Աղբար, պիղ պու ատամա վալեօլ սարայը
քիրալամատըգ եա՝ սօրճ հարճ իլէ անճագ
եաբարըգ. շիմալ թամիրի իշին իրօթէք (իս-
թիլալ) մը էտէյիմ:

Առ այս բարեկամը կը պատասխանէ:

— Մովկիմ աղա, չօգ թամահ չօգ զիյան կէ-
թիրիր. սէն ալթմըշ պէշ եաշընտա պիր ատամ
սըն, շիւքիւր, կէշինմէն եէրինտէ տիր. չօլուգ
չօճուղունտա եօգ, պուստան սօնրաագարէթ եա-
բըպ պիր թագըմ քիրաճըլար իլէ օղրաշմանըն
նէ՝ եէրի վար. պալտուսուս կէօթիւրիւ եաբարը-
րըլան էվին իշինտէն տիրիլէր էքսիք օլմաղ
տէրլէր. պիր տէ՝ գօնթրանթսըղ էվ քիրալայա-
նըն պաշընա պէօյլէ շէյլէր կէլէճէք տիր. պանա
սօրար իսէն՝ պու էվի հէման սաթմալըսըն, եօգ-
սա՝ սօնունա գատար նէ՝ թամիրի պիթէճէք տիր
նէ՝ տէմիրի: «Էվ քիրատը էվի եէր» տէմիլլէր:

Ֆիլիպէ

Բիմենյէ Լալոքսեան

ՀԱՆԵԼՈՒԿ

Պէտք է ծեծ ուտեմ

Որպէս զի երգեմ:

Ա. լուծողին կը նուիրեմ կատակերդու թիւն մը:

ԼՈՒԾՈՒՄՆ,

ԸՍՏՂ

Թիւ 191 «Հայելի»ի հանելուկին

«Ամենէ աւելի մարդը նիհարցնող սրհասան
է սրճարաններու մէջ մշակութիւնը»:

Պուրկազ

Մ. Մ

Печатница „Взаимость“ — Варна.